



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30561
Նոյեմբեր 21, 1988

Մեծայարգ
Տոբթ. Անդրանիկ Հազարեան
Ս. Խաչ Եկեղեցույ
Ծխական Խորհուրդի Ատենապետ
Նի Երրք.

Յարգելի Տոբթ. Հազարեան,

Այսու գիրով կը յայտնենք որ համայնքիդ պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորներու եւ անձնափոխանորդներու համար, Թեմական Կանոնադրութեան 14-Գ եւ 54 յօդուածներու համաձայն, եւ 1987 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրաստու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ծուխիդ նորընտիր պատգամաւորներուն անունները եւ հասցէները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը մինչեւ Փետրուար 17, 1989, որպէս զի կարելի ըլլայ հրաւիրել զանոնք Թեմական Պատգամաւորական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 4-6, 1989, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Ծարաթ օրերը՝ հիւրընկալութեամբ Էլպըրոն Նի Երրգիի Ս. Ստեփանոս Հայց. Եկեղեցույ:

Կը թելադրենք որ նորընտիր իւրաքանչիւր պատգամաւորի ինքնութիւնը հաստատող վկայագիրը Ծխական Խորհուրդի ատենապետին եւ ատենադպիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրներուն հետ:

Կը ներկայենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագիրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմոյշ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

TRANSLATION OF A LETTER SENT BY HIS EMINENCE
ARCHBISHOP TORKOM MANOOGIAN
REGARDING THE ELECTION OF DELEGATES

Dear

The term of the Diocesan delegate (s) of your parish has expired, and it is necessary for you to hold an election both for delegate and alternates, according to article 14-C and 54 of the Diocesan Bylaws.

We urge that the names and addresses of your newly elected delegates and alternates be sent to the Diocesan Office not later than February 17, 1989 so that we may be able to send them formal invitations to our annual Diocesan Assembly which will be held on May 4-6, 1989. The host parish is the St. Stepanos Armenian Church of Elberon, New Jersey.

Certification of the election of your delegates, signed by the pastor, and the chairman and secretary of the parish council, should be sent to the Diocesan headquarters for confirmation.

We enclose herewith a copy of the certificate to be mailed to the Diocese in the Armenian and English languages.

Prayerfully,

Archbishop Torkom Manoogian
Primate

November 21, 1988